

Հ Ա Ս Տ Ի

Rédaction du Journal arménien

ARCHALOUYCE


(EGYPTE) LE CAIRE



Ձի հրատարակումը անադիրները
ես չեմ տրտնար :

Բաժանորդագրությունը կանխիկ է, իսկ
ծանուցումները կ'ընդունուին մասնա-
ւոր հաճախություններ :

Բարձրագույն Երկրագործական
ԵՂԻՇԻ ՓԻՅՈՒՍԻՆ



ՊԵՏՐՈՍԻ

ԵՂԻՇԻ

Տարեկան դրոշմը


30

ԱՐՏԱՍՏՆԱՆ

Տարեկան գրանկ

10

Բաժանորդ ՅԱԵԼՈՒՍՏ ցերեկ փոխարեն
վերաբերվել գերեզմանի քաղաք :



ԱՋԳԱՅԻՆ. ԳՐԱԿԱՆ. ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Շ Ա Բ Ա Ք Ա Ք Ե Ր Բ

Թե՛ ԱՐՇԱԼՈՅՍԻ և թե՛ ՏՊԱՐԱՆԻՆ
վերաբերեալ ներքինիս խնդրոց հարևար
պիտի և ղիտեղ համարողութեան հասցեով
քերթիս Մասնադատարանին . որ է՝

ՓԵՏՐՈՍԻ ՓՈՓԱՔԵՆԱՆ

ԿԵ ՇՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՇԱՔԱՔ ՕՐԵՐԸ

Յօդուածագիրները ողջակի պատասխանա-
տու ԵՂԻՇԻ քաղաքին

ZUSC 20 ՓԱՄԱ ՈՂՋ

Ձ Ե Կ Ո Ւ Յ Ո Ւ Մ

Յօդուածագիրներէն յատկապէս
կը խնդրուի իրենց գրութիւններուն
մէջ յայտնուիլ բացատրութիւններէ
զգուշանալ և պատշաճութեան տու-
մաններէն չի շեղիլ, եթէ չին ուղեր
որ իրենց աշխատութեան արդիւնքը
լոյս տեսնելու իրաւունքէն չ'զրկուի
իւրիք :

ԱՊՐՈՒԱԾ ԿԵԱՆՔԷ

Ա.

ՋՐՊԱՐՏՈՒԱԾՆԵՐԸ

I

«Յանցաւորը մեռնողն է, չէ թէ
մեռցնողը» կ'ըսէ ժողովրդական ա-
ռած մը, որ կը թուի ծնած ըլլալ
նախապատմական այն խառնուրտ
դարերուն մէջ, որոնք ջրային ուժը
կը գիւցազնայնէին և փայրագութիւնը
ամպերու վրայ կը բազմեցնէին : Այ-
սօր, բերանոր տարիներէ ետքը,
աւելի խելահասած մարդկութիւնը
ուրիշ կերպ խորհելու և գործելու
միտում չի ցուցնիր : Այսպէս, ամե-
նէն քաղաքակիրթ կարծուող սոցիա-
լու մէջ անգամ մեծամարտութիւն,
կուսամարտութիւն իրենց գոյութիւ-
նը պահած են :

Անմեղ և պատուաւոր կը հըռ-
չակուի սրբիկ մը, խաբեբայ մը որ
կը յաշտի իր հակառակորդը գետին
տապալել, անոր տունը տեղը քան-
դելէն, կողակիցը գաշտալէն, զա-
ւակները առեւտնդելէն ետքը : Եթէ
ուշի ուշով քննենք, մենք գմեղ ա-
ւելի դատան, աւելի անիրիզճ պիտի
գտնենք քան մեր անտասարճակ նա-
խահայրերը : Այն ժամանակներ ի-
րաւունքի կամ արժանապատուու-
թեան զգացումը գոյութիւն չունե-
նալով, յայժմուտը իր գոյութեան իւ-
նը չ'էր կրնար աստիճանաջափել,
չուտով կը մտնար և հետեւաբար
չուտով ալ կը միտնարուէր : Բայց
հիմայ հանգամանքները փոխուած են
Այսօր պաշտօնապէս շարագործ կը
ուած գոյութեանը և ինչ որտա-
գնութիւնն ընենք, կրու՞մ զրոյնը-
նեքու, անիրաւ մերժումներու երե-

ւնէն քննարկողութիւններով պատա-
կած անապատներ պիտի գտնենք
մեծամասնութեան մէջ, այժմեայ
մարդը աւելի զդարձն ըլլալով :
Ինչո՞ւ որդեօք մեր արդարապիւր-
թիւնը զուգնթաշարք չէ զարգա-
ցած մեր ուղիքը բարձրագոյն հետ-
Այս հարցումն է՝ ո՞ր կերպով ալ
պատասխանուի, չ'պիտի կրնանք ը-
տել թէ մեր պատկերուն լա՛ւ անկէն
չինք հետեւիք, անոնցմէ անհատ-
մասօրէն աւելի զարգացած ըլլալով :

«Յանցանքը մեռնողին է» : Մա-
կայն աւելի ճշմարտախօս ըլլալու
համար պէտք է ըսել թէ՛ փոքրիկ
բիրտ ուժը, զարեբու հոլովութիւն
չ'կրնալով բոլորովին զիմադրել,
ձեւափոխութիւն մը կրած է իւր մէջ,
առանց իր մահացուցիչ բնոյթէն բան
մը կորսնցնելու : Փոխանակ տեղի,
ճակտի, նետի, պարտապիտի և այլն,
հանրային կարծիքը կը գործածենք
մեր սոսիալ տապալելու համար : Եւ
նո՞ր է մեր սոսիալ . մեզմէ տկարա-
գոյնը : Ընթերցողը մի քիչ խորհե-
լով պիտի համարուի որ, եթէ ան-
կար՛ղ եմ միտքս բացատրել, գէթ
չեմ՛ չափազանցեք . վկայ մեր օրե-
րուն հետեւեալ բանաձեւը . «Իրա-
ւունքը զօրաւորին է» : Վերլուծենք
այս բաները : Իրաւունք կ'են-
թաղիք բարոյական առաքինու-
թեանց խոստացո՞ւմը : Ինչպէս օրէնքով
զօրաւոր է այն անձը որ առաքինի է :
Ուրեմն իրաւունքը բարի մարդուն
է : Այս մեկնութիւնը, հիմնովին
ճիշտ ըլլալով հանգեւրձ, կը հակասէ
կողմնակցեանց, որոնց անընդհատ
ակնհաստե կամ դերակատար կ'ըլ-
լանք կեանքի պայքարին մէջ : Ար-
դարձ, ոչ ոք կրնայ բարի և առա-
քինի ըսել մարդու մը որ մի ու-
րիշը կը կողմնակցէ իր ամէն ունեցա-
ծէն, անոր ձայնը կը խնդրէ դա-
տարանները կաշառելով, և մեղա-
կիցներ կը վճարէ՛ վրան հազար ու
մէկ զբաղարտութիւններ ընելու հա-
մար :

Հարկ է ուրեմն ընթացիկ մեկ-
նութիւն մը տալ վերոգրեալ խօս-
քին, զայն հետեւեալ ձեւին մէջ գե-
լով . «Իրաւունքը ունենալու համար
զօրաւոր ըլլալու է» : Հիմայ հար-
ցնենք . ո՞ր է զօրաւոր պարտած կեան-
քի մէջ : Պատասխաններ կը վազեն

կուզան գունդադուռն . «Զօրաւոր է
ան որ նիւթական ունի խիզճերու
վրայ տիրելու համար . զէնք կամ
զբամ» :

Տկարն ո՞ր է . հարկ կայ ըսելու
թէ նա է տկար որ նիւթականէն
զուրկ է : Վերոգրեալ տալերը կը
պատկանին ընդհանուր կանոնի մը
որ՝ ինչպէս ամէն ընդհանուր կանոն
կրնայ իր բացառութիւններն ունենալ
Խիզճը՝ հանրային կարծիքն է .
Մեղաւոր խիզճը, և մարդկութիւնը
կըլլայ զիշատիչ պաշտաններուն ա-
մենէն վայրագը :

Եւ որովհետեւ իրաւունքը զօրա-
ւորին վերագրուած է հանրութեան
կողմէ, բնականաբար տկարը մար-
մնացումն է ամէն տեսակ մար-
մնանց :

Հոս բարդատուութիւն մը զննենք
փակագծի մը մէջ . երբ մեր նախա-
հայրերը «յանցանքը մեռնողին է»
ըսելով կը զարնէին, առջեւին դիակ
մը կը փռուէր, որ՝ եթէ հաշտ չը-
ծածկուէր՝ մի քանի օրէն կ'անհե-
տանար թռչնային ճիրաններու և գա-
ղանային ժանրքներու տակ : Մեր ա-
ռաւելութիւնը հոն է որ, «իրա-
ւունքը զօրաւորին է» բանաձեւով,
մենք տարիներով կը շարչարենք բա-
նաւոր էակներ, զորս մեր եսամո-
լութիւնը միայն կը նկատէ իբր զի-
տակներ և որոնց զաւարտութիւն մէջ կը
վնասենք մեր փառքն ու մեծու-
թիւնը . . . :

Բազմատուութիւն մ'ալ : Ինչպէս
ըսինք, մեր կուսակալ նախահայրերը
զարեբով աստուածացուցին և պաշ-
տեցին ամէն հրէշութիւն, ամէն
բրտութեան, ամէն մոլութիւն Մենք՝
որովհետեւ ճշմարիտ կրօնքին կը հե-
տեւենք՝ այս ամէն աղաւոր բաները
կը պաշտենք երկրիս վրայ և անոնց
ներկայացուցիչներուն խուճկ կը մա-
տուցանենք, մինչև անոնց գերեզ-
ման իջնելը . անկէ ետքը մէջ մ'ալ
զանոնք չ' յիշելու համար . . . :

Բայց, ինչպէս գրութեանս վեր-
նադրէն ալ կը հասկցուի, այս հա-
ճելի կամ անհաճոյ իրականութիւն-
ները ըսել չ'էր նպատակ : Ուստի ալ
զազար տանք մեր շարժապիտութեան
և տեսնենք թէ՛ որո՞նք են զրոյրա-
տուածները :

Ա. ՊԱՆԿԵՆ

Թ Ղ Թ Ա Պ Ա Ն Ա Կ

Սոյն վերագրին ակ պիտի անխա-
փեմէ այն բոլոր գրութիւնները որոնցով
պիտի գրադիմէ առաջիկային, երբ ժամա-
նակը հասնի և առիթը ներկայանայ
Եսայի քան սերտագոյն յի վերնու-
սարակման սխալիչ բարեկամ մը՝ քերթիս
նմրագրութեան անդամներէն միայն զը-
ւած է հետեւեալ յայտարարութիւնը, որը
ներկայիս սոցալիստ գործոց մեջ այժմեական
և կարեւոր սեղ մը գրաւոր կոչուած է :

ՅԱՆՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

— 0 —

Հայ Յեղափոխական գործը՝ նուիր-
ուած ժողովուրդի գերագոյն շահերուն
պաշտպանութեանը և հայրենիքի ազա-
տագրութեանը, բնական է որ պէտք է
զանուի բարոյական բարձրութեան վը-
րայ և առաջնորդուի մարդու և ազնիւ
միջոցներով :

Յաւայի է սակայն որ մտաւոր անց-
եալին մէջ՝ կարգ մը անարժան անձեր
յեղափոխական շարքերու մէջ սպրդելով՝
յեղափոխական զիմակի տակ իրենց
զատապարտելի արարքներով պատճառ
զարգան յեղափոխութեան մարտու-
նունը աղտոտելու և յեղափոխական-
ներու վարկը կորսնցնելու յայտ ժողովուր-
դին :

Մասնաւորապէս վերջերս գրածի
պատճառով կատարուած մէկ քանի ըս-
պանութիւնները ո՛րն ապաւորութիւնը
թողցին շատերու մտքին մէջ թէ՛ Յե-
ղափոխական կուսակցութիւնները կը
թոյլտարին սպանաւորիքով գրամ պա-
հանջելու և գրամի համար սպանու-
թիւններ գործելու սխալիքը որ շատ չի
տարբերի առաջադիմութենէ :

Անհրաժեշտ է ուրեմն որ միանգամ
ընդ միշտ գիտցուի, թէ Յեղափոխական
կուսակցութիւնները, առանց բացառու-
թեան, կը զատապարտեն բոնի գրամ
հատարելու և չի համակերպողները մա-
հացնելու անարարական միջոցը :

Այս կէտը բացորոշապէս յայտա-
բարել է վերջ. հարկ կ'զգանք նաեւ այս
տալիս . ի գիտութիւն և ի զգուշու-
թիւն հատարակութեան յայտնել թէ,
սոցալիստ թաշտանակի սպանութիւնէն
վերջ (գործ մը զոր մենք զատապար-
տելով կը զատապարտենք) եզրապատի
մէջ երեսան եկած է Շանքադիս խուճիք
մը, որ օգտուելով մտքերու չիտիւ-
թիւնէն և այդ գեղեցիկ սպանութեան
տակ գանուող հայ հարուստներու հոգե-
բանական վիճակէն, սկսած է՝ մէկ կողմէ
շահագործել հայ հարուստները, զանոնք
վտանգներէ պաշտպանելու ձեւին տակ
մշտական սարսափի մէջ պահելով և
միւս կողմէ կը հետամտի իր իսկ մտքին

մէջ գործած դաւերովը վարկաբեկ ընել յեղափոխականները եւ փաստել հայ յեղափոխական գործին :

Այս կերպով, նոյն այդ Շանքաժիս խումբը, որ ըստ հրեւոյթին կը հալածէ ծանր դրամաշար Խոսրոսի հետեւորդները, իրականութեան մէջ այդ խումբին ստատար եւ մրցակից կը հանդիսանայ եւ անոր առիթ եւ զիւրութիւն կ'ընծայէ նորանոր շահատուութեանց ձեռնարկելու :

Ներկայ յայտարարութեամբ կը դաշակենք հայ հասարակութիւնը եւ յեղափոխական շարքերը, չի խարոյի այդ շահախնդիր եւ կեղծարար խումբի սաղարթներէն եւ խաբարայութիւններէն :

Միանգամայն ի կարգ կը հրաւիրենք այդ շարագործ խումբի անդամները որ վերջ զնեն իրենց նենդամիտ զարձուածքներուն եւ չ'փորձեն պղտորել հայ հասարակութեան միտքը ի վրէժնա յեղափոխութեան. ապա թէ ոչ պիտի ստիպուինք հրապարակ նախկին իրենց անունները որ մեզի ծանօթ են եւ զիրենք մասնանի ընել հանրային գաւառատանին :

10 Դեկտ. 1907

Եղիպատի Հնչակեան եւ Վեր. Հնչակեան Մասնաձիւղերու Խառն Յանձնախումբը

ՄՈՒՐԱՏ ԵՒ ԱՄԵՐԻԿԱՆ ՄՍՄՈՒՄ

Ամերիկեան քաղաքի քերթեր, որ պիտի են « ճրքեր » « Թայլոյ » եւ այլն յարգալից յորուածներ եիև նուիրած Բնկեր ՄՈՒՐԱՏԻՆ, բայց մեկ կը բաւականաճանկ միայն « Եւր - Եւր » Քրիստոսի որ գրածները քաղաքապետ առաջ քերթով ԵՐԻՏՍՍՍՐԴ ՀՍՅԱՍՏՍՆ

Չորսպեա (խմբագիր ըսել կուզէ) Համբարձում Պոյաճեան, պարագլուխը Հնչակեաններու, կամ հայ յեղափոխական կուսակցութեան, երկի Բարեկէն Նիւ-Եօրք մամանց կա կապոս նստով, իւր միտքն է կազմակերպել Միացեալ-Նահանգներու մէջ բնակող իւր հայրենակիցները, ինչպէս Եղիպատի մէջ ըրած է, որպէս զի երբոր մամանակը գայ, մղէ դանձք բուն ինչամոյն զէմ ձեռք բերելու համար իրենց ազատութիւնը Սուլթանի կառավարութիւնէն :

Չոր. Պոյաճեան, որը հանրածանօթ է Մուրատ անունով, Սասունի Հեռոսն է որ 1894ին առաջնորդեց հայ յեղափոխական խմբերը ընդդէմ Չէքի Բաշայի հրամանին ներքե զանուզ պաշի պողոտիներու եւ քրտերու, Բուսն ճակատամարտէ մը վերջ, երբ Մուրատի հետեւորդներու ուսազմութիւնքը սպանեցաւ Մուրատը ձերբակալուց :

Թուրք կառավարութիւնը մահուան դատապարտեց Մուրատը, սակայն անդ լիոյ, Բուսնոյ եւ Ֆրանսոյի միջամտութեան շնորհիւ այդ վճիռը փոխուեց 101 տարեայ իրազարգելութեան :

Մուրատ 12 տարի բանտարկուած միտց Թարապուսի բերդին մէջ, եւ ինչպէս երկի բացատրեց Բարդ Էլընի 0թէլին մէջ, շատ անգամ փախազած էր, որ թիւրք կառավարութիւնը իւր առաջին վճիռը գործադրէր, քան ենթարկէր այդպիսի ստակալի տանջանայց Մուրատի կողմիցն ալ մէկ կուռի մէջ ձերբակալուելով կախազան բարձրացած է Մուրատին տրուած տանջանքներէն մէկն այ այն է, որ իրեն արգելուած է ո' եւ է մէկու հետ խօսիլ, հակասակ պարագա՛ղին, զլիւծար կախազան պատրաստ էր իրեն համար :

Մտտ երկու տարի առաջ, Հնչակեան կուսակցութեան կեդր. վարչութիւնը յաջողութեամբ զլուր բերուե Մուրատի փախուստը Մէկ զանի արարներու օգ-

նութեամբ, գիշեր ժամանակ, նաւակ մը կը նստի եւ կը փախչի :

Պոյաճեանը, որ բարձրահասակ է, յանդուգն կուռողի տպաւորութիւն կը թողու : Մուրատ ըսաւ. « Ինքը շատ կը փախալի, որ Թարապուսի լաւ մտքն է Հայ Յեղափոխական Հնչակեան կուսակցութիւնը ո'չ մի կուռ եւ անհուստիւն հուշի այն մի շարք ինքնակոչ Հնչակեաններու հետ, որոնք պատասխանատու են անցեալ տարի կատարուած մէկ կրկու անհուստութեանց »

« Այս մարդիկը, ըսաւ, թարգմանի մը միջոցաւ, « Հնչակեան » անունը կը գործածեն միմիայն օգտուելու համար այդ անուան հմայքէն Եւ չիմ ընդունիր որ անոնք Հնչակեան ըլլան, այդ մարդիկ չեն պատկանիր մեր կուսակցութեան Մենք յեղափոխական կազմակերպութիւն մ'ենք : Նպատակ ունենալով միայն մեր ազատագրութիւնը, զոր անպայման ձեռք պիտի բերենք՝ կազմակերպուելով աշխարհի բոլոր կողմերը : »

Հայերը, որոնցմէ վեց հազարի չափ կան Նիւ - Եօրք եւ իւր շրջակայքը, շուտով հրապարակային ժողով պիտի ունենան ողջունելու համար իրենց պարագլուխը : Նահանգներու բոլոր հայաբնակ քաղաքները եւ նոյնպէս պիտի անցնի Պուլկարի եւ այլ երկիրներ՝ կազմակերպական նպատակով :

ԵՒ ԱՆՈՒՅՈՒՄ

Կը խնդրուի « Արշալոյ » թէ՛ արտասահմանի եւ թէ՛ եղիպատի այն յարգելի բաժանորդներէն, որոնք մինչև 1905 Օգոստոս ամիսը վճարելի հաշիւներ ունին, եւ որոնցմասնակի գումարներ ալ եղած են ու անպատասխանի մնացած, որ բարեհաճին իրենց վճարումները փութացնել ստորագրելուս հասցէին :

Կը խնդրուի նաև հօգելոյս Տէր Ղևանդ Եպիսկոպոս Երջմանեանի երկամբութիւնն իմ Ա. քառի կեանքը » տիրուտով հրատարակութեան ըստացող եւ տակալին չ'վճարող աղքատներէն, որ նոյնպէս իրենց ստացած պրակներուն փոխարժէքը զրկել հաճին ներքոյ գրեալ հասցէս :

Ե. ՅՈՐՈՍԵԱՆ

Հասցէ՝

Mr. E. Torossian

Le Caire

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԴՐՈՆԻԿ

ՏԻԿԻՆ ՍԻՐԱՆՈՒԹ

ԳԱՄԵԼԻԱԶԱՐԴ ՏԻԿԻՆ ԴԵՐԻՆ ՄԷՋ

Սոյն թատերախաղը՝ իւր նմոյշ կը ներկայանայ այն արկածախնդիր, շուտայտ, ցոփ կեանքերէն՝ որոնք յաճախ պէտք են Բարիքի անհուն մխոթին մէջ : Մեծազոր, ապշեցուցիչ, արտատուր գրուածներ չ'պարունակէր իր մէջ. սակայն եւ այնպէս մեծանուն հեղինակը Աղէքսանդր Տիւմա՝ այնպիսի շնորհալի հրապարակ մը տուած է անոր, որ ներկայ կեանքերու համար կրնայ վսեմ բարոյական մը պատկերացնել :

Անցեալ Չորեքշաբթի գիշեր սոյն թատերախաղը Վերսի թատրոնին մէջ ներկայացուեցաւ Տաղանդաւոր Դերասանուհի Տիկին Սիրանուշին ի նպատ-

Թարապուսի մուտքը գեղատեսիլ դարձրին որով ու սողաթիւնով զարգարուած էր, որոնք ելքաբարկան լոյսերու ողորտ մին տակ հաճելի տեսարան մը կը ներկայացնէին :

Հանդիսակոններու ընտիր եւ խումբն բաղաւթին մը ներկայ էր : Ատոնց մէջէն աչքի կը զարնէին Վեմ. Պոլոս Բաշա Նուպար եւ Երիշներ :

Ներկայացման նիւթին գալով : Մարկարիտ Կոթիէ՛ ցոփ, շուտայտ, ինքնամատոյց, բարձրահասակ՝ նոյնքան ալ զիզեցիկութեան ամեն ժպիտներով օժտուած գեղատեսիլ բարիքուհին, որ ջերմ փափաք մը կը պար, բարձր, հարուստ, միտնող ամայն անմիտ անձնաւորութիւններէ շրջապատուած տեսնել ինքիցը, ամենու հանդէպ հեղեղ, ծիծաղող, արձամարող կը ներկայանար : Ունէր սիրտ մը, որ չ'զիտեր սիրել, բայց ճարտար է ննդիկ, հրապուրել, սիրտ մը՝ սիրային մաքուր լալաճատաչ արտայայտումները փչող կործանող :

Սակայն բնութիւնը որ կատակ չի սիրէր, որ մը յանկարծ կը փլցնէ կը խոնարհեցնէ այդ գոռոզ սիրտը : Արման Տիւմա՛ն անուն զիզեցիկ երիտասարդին կը յափշտակուի իր բոլոր հօգելով : Արման ալ փոխողարձար կը սիրէ զայն : Մարկարիտ հիմայ ո'ր մտնալ կուզէ ակտաբոյր, աննպատակ, ցոփ կեանքու Պճնաթրու թեան այս երկրպագուն՝ խաղաղ, պարզ անպղտոր կեանքը կը կրակէ : Արմանի սէրը բոլորովին բարեփոխած էր զայն : Սակայն անցեալը՝ անողորմ ուրուականի նման կուզար սեղնել իր երազած վարդաօգն տպագան :

Անա Արմանի հօյրը՝ հոգեգործ պատասխանիչ անձ մը՝ կուզար Մարկարիտի յայտնել թէ՛ չ'կրնար ինքը Արմանի սէրը վայելել, քանի որ պղտոր անցեալ մը ունէր :

Հոս Մարկարիտ երկրորդ անգամ կը պարտուի. առաջինը սիրոյ հարուածն էր որ մէկէն կը փախկացնէր այդ մայր ստացեալ սիրտը, հիմայ սերն էր որ կը յաղթուէր խղճմասնքի, անհուստութեան հանրիւ հայեացքին սուղնէ :

Մարկարիտ կը խոտտանայ խաղաճ մտնալ Արմանը, մտնալ զինքը . . . որ սրբին մէջ առաջին անգամ շրջացող սիրոյ աննեղ սարսուռ . . . մտնալ զինքը մեռնելու պայմանաւ :

Մարկարիտ իրօք կը լքէ Արմանը եւ կը հեռանայ, բայց չ'կրնար մտնալ զայն երկուքն ալ զիրար կը սիրէին մուլեղին : Մարկարիտ կ'ստիպուէր խաբել Արմանը՝ ըսելով թէ ինքը ուրիշ կը պատկանի :

Սակայն թոքախոր՝ սիրահարներու անհաշտ թշնամին՝ կը գործէր իր յամր աւերումները Մարկարիտի թոքերուն մէջ, ան որ օրի կը մտչեր կը նիծարնար լուս հատնումով մը : Վերջացեալ մամբուն մէջ միայն կը գտնէ Արմանը ի :

Տարաբազ գղջիկը՝ զայն տեսնելուն կը մտնայ ցաւերուն մահաշուք նողանքեր . . . կուզէ զօրս ելնել պըտալով Արմանի թեւին կրթնած . . . բայց աւա՛ղ, վաղանցուկ ետանդ մ'էր այն . . . մահուան խաղը, որ պահ մը կը կասի մէկէն յարձակելու եւ վերջացնելու իր զօնը : Մարկարիտ կը մեռնէր իր սիրահարին բաղակներուն մէջ :

Մարկարիտի գմուտին գերը կատարեց Տիկին Սիրանուշ, իրաւամբ յայտնելով զերասանուհիի մը ցուցող տաղանդը : Արդար ըլլալու համար կրնանք ըսել թէ՛ յարգելի Տիկինը օժտուած է արուեստի բազմերանց նշոյլներ ցայտեցնելու կարողութեամբ : Ինչպէս արհամարհող, հեղեղ հոգի մը՝ յանկարծ գթոտ, զգայուն երանց մը կ'ստանայ : Կրկեր հառաչանքները մահուան բոպէ :

ներուն, ապրիլ՝ սիրիլ ցանկացող ողորմ արտայայտումները, գաղկացեալ գէմքին սրտամորմոք տխրութիւնը, այնքան կատարեալ էր որ՝ կրցաւ հանդիսակոններուն աչքերը լճացնել :

Պ. Ստեփանեան կրցաւ հրապուրող սիրահարի մը գերակատարը հանդիսանալ : Նորհաւորելի էր մինչև խաղին վերջաւորութիւնը :

Հոս չ'պիտի կրնանք մոռնալ յիշատակելու Պատ. Յանձնախումբին ջանքերնալ, որ բան մը խնայած չէր երկնոյթը հրապուրելի գործնելու համար :

ՍԵԹ ԳԱԼԵՄՃԵԱՆ

ՓՈՐՓՈՒԿԱԼ

ԱՐԿԱՅԱՊԱՍՆՈՒԹԻՒՆ

Օրուան լուրերուն մէջ ամենէն կարեւոր տեղը կը գրուէ Փորթուկալի Մայրաքաղաքին մէջ տեղի ունեցած արքայապանութիւնը :

Թէպէտեւ նմանօրինակ դէպքերու առաջինը չէ որ պիտի տրձագրենք այս տեղ, բայց շատ հաւանական է որ վերջինն ալ չըլլայ, եւ արքայապանութեան դէպքերը այս ընթացքով աւելի երկարին :

Այս անգամ Փորթուկալի թագաւոր Տօն Բարլոս, եւ զահաճաւանդ արքայորդին, իշխան Լիւիլ՝ կ'իշխան ցուցարարներու անուրբ զնդակներուն առջև, նսեմացնելու համար անշուշտ սպանութեանց ա'յն բոլոր դէպքերը, որ հոս ու հան տեղի կուենան նուազ աչքի զարնող հոգիներու վրայ :

Փորթուկալի թագաւորը 1863ին ծնած էր, հետեւաբար 45 տարեկան էր իսկ դահաճաւանդը իշխան Լիւիլ 21 տարեկան է : Սպանեալ արքային կրտսեր որդին Մանուէլ՝ որ թագաւոր հռչակուեցաւ հիմայ, Փորթուկալի Մայրաքաղաքին - Լիզպոնի մէջ ծնած է 1889ին . 19 տարեկան կը բարձրանայ արքայական գահը կառավարելու համար ժողովուրդ մը, որուն ծոյցին մէջ հազարաւորներով փորձառու եւ խելացի մարդիկ կը գտնուին . . . :

Լիզպոնի արքայապանութեան մանրամասնութիւնները բաւականէն աւելի սրտառուչ են :

Փետրուար 2ին Լիզպոնէն տըրուած հեռազիր մը հետեւեալ տեղեկութիւնները կուտայ :

« Արքայական ընտանիքը Վիլլա Վիլյոզան պալատը կը վերադառնար բաց կառքով, երբ նաւարանին մօտեւր խումբ մը սպառազինեալ մարդիկ, գարապինաներով կրակ ըրին կառքին վրայ : Թագաւորը եւ զահաճաւանդը շուտով նաւարան փոխադրուեցան, ուր՝ իրենց ստացած երեքական գնդակներուն ցաւոյը տակ աւանդեցին իրենց վերջին շունքը : »

« Թագաւորան իմանուէլ ալ թեթեւ վերքեր ստացած, բայց թուրուհին անվնաս մնացած է : »

« Ոստիկանութիւնը կրակ ըրու արքայապաններուն վրայ, որոնցմէ երկուքը սպանուեցան, իսկ երրորդ մը բանտ տարուելով, այնտեղ սննդնասպան եղած է : »

Նոր թագաւորը, Մանուէլ, սնահափաճութեամբ ըլլալով, թագուհին խնամակալ կարգուած է անոր վրայ:

Արքայազանութեան այս ահաւելի տուած մեծ յուզում յառաջ բերած է բոլոր թագաւորական գերզաստաններու մէջ:

Ժողովուրդին կողմէ համակրալից ցոյցեր տեղի կունենան հիմայ, և կառավարական բանտերը քաղաքական յանցաւորներով լեցուած են:

«Թագաւորը մեռաւ. կեցցէ՛ թագաւորը» Ամբարը ուժ ունի՛ բայց ո՛չ խելք. ըսուած է տեղ մը:

Ա.Ձ.Գ.Ա.ՅԻՆ
Ե Ա Ր Ր Յ Բ

Ա.Գ.ԲԱՆԳՐԻՍ
Եղիպտոսի Գեր. Առաջնորդ հօր նախագահութեան ներքեւ Աղէքսանդրիոյ Երեսփոխան Ժողովոյ ընտրութիւնները վերջ գտած են առանց ու ե է միջադէպի:

Ընտրելու իրաւունք վայելող 400է աւելի ազգայիններէն առաջին անգամ քուէարկութեան մասնակցած են 127 քուէարկուներ, և համեմատականի մնացած հինգ անգամ ներու ընտրութիւնը կատարուած է 169 քուէարկուներով:

Աղէքսանդրիոյ Աղգային Երեսփոխանական Ժողովոյ նորընտիր անգամք հետեւեալ անձնաւորութիւններէն կը բաղկանան:

Վ. Վ. Տ. Տ. Աբրահամ Բաշա Բարթոլ. Միհրան Խան Գալֆայեան, Արթին պէյ Բէրլեան. Գ. Մուլթաֆեան, Հայկ Էքիզլէր, Արեւակ կամսարական, Գառնիկ Զարգեան, Պերճ Օհանեան. Գէորգ Սարգիսեան, Ալեքսան Ժէվահիրեան, Տիգրան կամսարական, Լեւոն Մկրտիչեան, Արմենակ Ժամկոչեան. Գէորգ Մէրամէթեան. Գէորգ Իփէկեան:

ՅԱՐԵՆԻԱՆ

Ռուսահայ գրագէտ Պ. Լէօի գրական գործունէութեան 25 ամեայ Յորձեանք առաջիկայ Ապրիլ ամսուն մէջ պիտի կատարուի կոյկասահայերուն կողմէ:

Կ'ըսուի թէ՛ Եղիպտոսացիներուն մէջ ալ նախաձեռնարկ եղողներ պիտի ըլլան մասնակցելու համար մեանուն մատենադրին քառուղի դարու անխնայ աշխատութիւնները վարձատրելու նպատակաւ եղած ջանքերուն:

Ն Պ Ա Ս

Կովկասահայ Պ. Տ. Աֆրիկեան դարբնացած է թուրքի չալուհեաց միացեալ բարեգործական ընկերութեան տարեկան նպաստը, որ կարեւոր դուրս մ'էր:

Թուրքի այդ ընկերութիւնը տարիներէ ի վեր կը գործէ արգիւնաւորապէս և քանի մը վարժարաններ կը կառավարէ իր նպատակներով: Ասկէ առաջ արգէն առիթը ունեցած ենք այդ ընկերութիւնը ծանօթացնել Եղիպտոսի չալուհեան:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԻՔ

Իտալական կառավարութիւնը Ամերթոնի տան հետ համաձայնած է, իր մեծ պատերազմաւորուն ըստպառաջինութիւնը կատարելու համար:

Իտալիա այսպէս վարուելով առաջնութիւն տուած կ'ըլլայ անգլիական զինագործարանին քան Գերմանական Քրիփի տան՝ որ նոյնպէս զեղջիւր ընելու տրամադիր էր: Այս կարգադրութեան զանազան մեկնութիւններ կը տրուի Գերմանիոյ մէջ:

Նիւ - Եօրք Օրինակալ գրամատուներ իր գունները վակեց, դրամատանց ընդհանուր վերակացուին հրամանաւ:

Ալճէլիբասի մէջ ձերբակալուեցաւ Ժօլէ Ամօր անունով վտանգաւոր անիշխանական մը, որ Սէվիլի կ'երթար, ուր կը գտնուին այս պահուս Սպանիոյ թագաւորը և թագուհին:

Ժընէվի մէջ Ռուս անիշխանականներու պատկանող տպարան մը ձեռք անցուցած է. չորս Ռուս ձերբակալուած են: Հանրային գործոց վարչութեան մէջ այս խնդրով կ'ըլլաւ զորի:

ՏԵՂԱԿԱՆ
ԼՈՒՐ

ՊԱՐԱՀՍԵՆԻՍ
Փորթուկալի արքայական ընտանիքին պատահած դժբաղդութեան պատճառաւ, Նորին Բարձրութեան Խափիին սարքել որոշած պարահանդէսը՝ որ ամսոյս 30ին տեղի պիտի ունենայ, յետո՞՞ գուցէ է:

Տեղադրուած ձերբակալուածները Տօն Բարձր թագաւորին հանուն առթիւ, ի նշան սգոյ կէս դրոշակ պարզած են:

ԲԱՅՄԱՆ ՀԱՆԳԷՍ
Ռոտտի կամուրջին բացման հանդէսը անցեալ հինգշաբթի օրը տեղի ունեցած է Ն. Բ. Խափիին նախագահութեամբ:

Բարձրաստիճան անձնաւորութիւններ և Տիկիներ ներկայ եղած են հանդէսին:

Վ. Փարիսի Իւշա ընդունելութեանց տաղաւարին մէջ ճառ մը արտասանած է, որուն պատասխանած է Ն. Բ. Խափիին, երկրին օրըստօրէական յառաջդիմութեան համար իր ուրախութիւնը յայտնելով և միանգամայն շնորհակալութիւն յայտնելով որ կամուրջին շինութեան ծրագիրը զԼուիս բերուած է իր անունին նուիրուած է:

ԹՎԱՌՄ
Անցեալ շաբթու Գահիրէի Խառն Դատարանաց գատաւոր Պ. Վասքէի՝ որ յանկամամահ եղած էր, թաղման հանդէսը տեղի ունեցաւ ամենամեծ շքով:

Կաթողիկոսներու գերեզմանատան մէջ շատ մը ճառեր արտասանուեցան հանգուցելոյն բարեմանուութիւնները յատկանշող:

Խառն Դատարանաց նախագահ Պ. Հէրցպրիւք քալ իր կողմէ թուեց այն բոլոր առաւելութիւնները, որոնցմով օժտուած էր հանգուցեալը և վերջացնելով խօսքը ըսաւ. «Այսօր քեզի, վաղը ինձի. ասիկայ մարդկային կեանքի հակառակ կողմն է»:

Պ. Վասքէի պիտի յաջորդէ Մանսուրայի գատաւորը Պ. Լուի Գօմիւլատաւ:

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Գահիրէ Հայկ Խաչատուրեան. — Ըզձեզ ճանչնալու պատիւը չունինք. Թերևս զուր շատ բարի և ազնիւ երիտասարդ մ'էք, բայց ձեզմէ աւելի հնարամիտ մէկէն խաբուած . . . կը ցաւինք որ Ձեր գիտաւորութեանց նպատակաւոր վերաբերում չենք կրնար ցոյց տալ: Յարմարագոյն է կը կարծենք Ձեր ամենամեծ շրջանակներուն դիմել:

Հ Ն Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Լիզպոն 2 Փետր. — Տօն Բարձր թագաւորը ևր զանաժառանգ իշխանը սպանուեցան:

Արհաւիրականներէն երեք յետոյ յիշույ սպանուեցան ոսիկաններէն:

Ռաշիկկըքը 2 Փետր. — Խորհրդարանին հանրապարտութիւնը (démocrate) ուրախութեան ցոյցերով ընդունեցին Պ. Ռուզիէրի պատգամագիրը: Երեսփոխանական հանրապարտութիւնը Տալիզ քաւ թէ՛ ասիկայ ամեն շաւաղնէ հանրապարտական վաւերապրոքն է որ Հանրապետութեան յետեւ անխաղաղ ստրագրած չէ երբէք:

Կ. Պոլիս 2 Փետր. — Անկիո-Ռուսական դիմումին հետեւեալ, Բ. Դուռը ինքրեց Պարսիկ կառավարութեան ֆիրմերու դէմ զպողական միջոցներ ձեռք առնել:

Նոր հրահանգներ դրկուած է Թուրք հրահանգարին զգուշանայ պարսկական հողին վրայ արշաւելի:

Բարիզ 3 Փետր. — Պ. Բիշօն Խորհրդարանին ծանոց թէ՛ Երանսական կառավարութիւնը իր միջնորդական արտաշայտքին մը Բորթոկալի:

Պերիլ 3 Փետր. — Ռուսիայակը իր համակրանք արտաշայտք Բորթոկալի արհաւիրական ղեկակցին:

Բարիզ 3 Փետր. — Չորայար Աւաս կր հետագրէ թէ՛ գնդապետ Պարթկուրի գորսաբաժնի ինչպիսի յայրաբանակ մը սարաւ Մզաւկաի մէջ թշնամոյն կորուստները անհաշուելի են: Մեզմէ այսպէս մը միայն մեռաւ:

Լիզպոն 4 Փետր. — Մանուէլ թագաւորին ստացած վերերը զգալի բարեփոխութիւն մը կրեցին:

Լիզպոն 4 Փետր. — Նոր քաղաւորը անխաւարաց անդրանիկ խորհրդոյն մէջ քաւ թէ՛ «Ես պե՛տեղ ծանօթութիւնը ևր փոխառութիւնը յունիս ևր ինքզինքս մեր ձեռքին մէջ կը դնեմ, Ձեր հայրեանախորտեան ևր իմաստութեան վրայ վստահելով»:

Բարիզ 5 Փետր. — Մովակալ Թուշար Ս. Բէթրայուրկի ղեկապան անուանուած է:

Լիզպոն 5 Փետր. — Խորհրդարանը խաղաղասիրական միջոցներով կ'զբաղի:

Պ. Տրաւիզո Մասրիս պիտի մեկնի Պերիլ 5 Փետր. — Կայսրը հրաւիրելու իր գրաստանը արշաւիչ հեղինակ Մասրիս ունեւայ, Գործուն մեկնելու համար:

Լիզպոն 6 Փետր. — Թագաւորը հրահանգիրներ ստրագրեց, որոնցմով կր հաստատէ Մալոյ ևր խորհրդարանական ազատութիւնը: Վարչային յանձնարարները, որոնցմով Պ. Տրաւիզո Վարչական հիւն դրութիւնները ներմուծած էր, իրեցը հրահանգները մասնոցին:

Բարիզ 6 Փետր. — Պ. Բիշօն անխաւարաց խորհրդոյն յայտարարեց թէ՛ Մարօֆի կարգութիւնը ո՛ր է և փոխխորհրդին կրած չէ:

Լոնտոն 6 Փետր. — Խորհրդարանին մէջ Պ. Մագ Նեյլ՝ Սըր Է. Կրեյլին հարցոց թէ՛ հետագիր մը ստացած է Մուսաբաւ Բաշա Բաւեյի զանգատ յայտնող իր ա՛յն յայտարարութեան դէմ թէ՛ եղիպտոսացիները պե՛տեղ յարմարութիւնը չունին Սահմանադրական կառավարութիւն մը հաստատելու համար հոն:

Սըր Է. Կրեյլ պատասխանած է թէ՛ սակաւին բան մը ստացած չէ. Եւս հարցադէպ է, քսած է նա, որ ասեմախօսութիւն մը ամեն մարդու ալ հարաստապէս հանելի ըլլալ:

Կ. Պոլիս 7 Փետրուար. — Երկար խորհրդակցութիւններէ յետոյ, մեծ Տերութեանց Դեպտանները Բ. Դրան դիտողագիր մը ուղղեցին, պնդելով իրեցը անխաղաղ քրած ստացարկին ընդունելութեան վրայ, և մերժելով Մակեդոնիոյ ոսիկանութեան մէջ օտար պաշտօնատարներ աւելցրելու անհամար ըզջալիք ևր կարգադրութեանց մասին Բ. Դրան անստրակած պայմաններ:

ՏՊՐ ԵՍՐԷԼ Լ. ՃԵՐՈՊԵԱՆ
ՇԱՐԱ ՆՈՒՊԱՐ ԲԱՇԱ, ԹԻՒ 20

Ամերիկայի համալսարաններէն վկայեալ և անուանի հիւանդանոցներու մէջ գործնական փորձաւորութիւն ստացած բժշկուհի. յաջողակ փորձաւոր են թակային առանց ցաւ պատճառելու:

Մանկաբարձուհի և մանագէտ կանանց ճնշողական գործարաններու և արտոգիտեան արտերու, իսկ մանուկներուն՝ ամէն տեսակ հիւանդութիւններու:

Կատարեալ խնամքով և գիտական նորագոյն մեթոտներու շնորհիւ հիմնապէս կը բժշկէ իր խնամոց յանձնուած հիւանդները:

Հիւանդ կ'ընդունի ամէն օր կես օրէ յետոյ ժամը 2-5

Ամէն երեքօրի ապստաց զրկ դարմանում:

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԾԻԱԽՈՒՑԻ ԵՒ ԸՆՏԻՐ ՍԻԿԱՐԷԹՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ՎԱԿԶ - ԷԼ - ՊԻՐԲԷ ՓՂՂՈՅ ԷՕՁՊԷՔԻՅԷ



ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԸ

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐԻ

ՅԵՏԿԱՆԵՐ ԻՐԵՆՑ ՎԵՐԱՊԱՀԵՈՒ Է :

Արեւելեան ընտիր ծխախոտներէ պատրաստուած թարմ սիկարէթներ անմրցելի աժան գիներով ունենալու կամ չայելլու համար, ամէն անգամ և ամէն տեղերէ աւելի՛ պէտք է նախընտրել մեր վաճառատուները :

Առաջնակարգ տեսակներէ Եւրոպական սիկարուներու լաւագոյնի զանազանութիւնները գտնելու համար՝ հարկ չ'կայ հոս ու հոն ժամադաճառը լաւ բաւական է անգամ մը անպատճառ այցելել մեր վաճառատուներին :

Պարտական ամենաընտիր թէմպէքիի այլ և այլ տեսակները բայց մեր վաճառատուներէն, ուրիշ տեղերէ գնելը պարզապէս սխալի է :

Մեր վաճառատուներ լիբընպէս, զիններու աժանութեամբ, տեսակներու բազմազանութեամբ ու ճոխութեամբ և այլ ամէն տեսակէտներով, և մանաւանդ գործածել սրտչած ապրանքներուն թարմութեամբը անմրցելի է, որուն անփոխելի ապացոյցներէն մին ալ զարգացած և արագացններէ օրըստօրէ մեծ քանակութեամբ և ստուար թուով ելած յանձնարարութիւններն են :

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐԻ

ՄԱՆԿԸՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅՈՒՑՈՒՑԻՉ Ժ. ՆԱՅՏԻՆԻԿԻՐ

Պալատի փողոց . Խաչնէտարի սեփականութիւն, Պրիսթօլ Օթէլի ճիշտ գիւմար Գաֆէ Տը Լա Պուլսի կից

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԵՋ ՄԱՍՆԵՃԻՐԿԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի սմանէն լաւագոյն կարի մեքենաները Սինկլիթներն են ևւ ասոնցով մինչև ցարդ 17,000,000 ծախուած է :

400 և աւելի վիտրինան ևւ միսայններով վարձատրուած, Եւրոպայի ևւ միսայններ.

ԱՄԵՆԻՆ ՄԵՆ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ


Փարիզի 1900 ի Տիկտերակա՛ն արուեստահանդիսակն մէջ ստացած է .

ՀԱՌԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՍԻՈՅ ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԿՂՈՅ ԿԱՅՄԵՐԱԿԱՆ

ԿԱՅՄԵՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԻՐԻՆ ԵՒ ԹԱԳԱՌԱՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԵՍ

ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն. Բ. ԽՅՆՎԱԿՅՆ ՏԱՆ

Կեղծերէն զդուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ Սինկլիթ յասկանչիկն



Ձրի դասեր և նորոգութիւններ, Սինկլիթ մեքենայից համար, յաճախորդաց տուններուն մէջ :

Վճարմանց դիւրութիւն

Փոխանակութիւն հիներու ևւ նորոգութիւն ամէն կարգի Մեքենայից

ԳԻՆ ՉԱՓԱՒՈՐ

ՄԻ Հ Ր Ա Ն Ս Ա Գ Ա Ե Ա Ն Spécialiste pour les cheveux ՇՍՐԱ ԱՊՏ ԷՂ ԱՋԻՉ ԹԻՒ 5.



Մինչև հիմայ եղած փորձերով հաստատուած է որ Փայտայ Օթիկ կամ Պիր Օթիկ ևւ ասոնցով մանաւանդ պատրաստուած հեղուկներուն գործածութիւնը սրտչելի արդիւնքաւած է՝ թէ՛ մազերը չի թափելու ևւ թէ՛ երկնջնելու համար: Միակ գործանն է այս պատրաստութիւնը՝ անթմները, ոչխրներն ու մազերու արմատներուն վրայ բոյն դրած միքրոպները սպաննելու:

Մինչև ցարդ ինձ գիմոզներն վերջին ծայր զո՛ն մնացած բոլորով յոսով եւ՛ որ յետ այսու ալ զգո՛ւք ըլլալու պատճառ մը չ'պիտի ունենան:

Անխարդախ ու մեծ ինձանով պատրաստուած Պոլսոյ ամենաընտիր մազի ներկերուն ամէն գոյներէն ալ կ'օրէյլ է զանկ իմ վաճառատուս:

Դիմեցէք, փորձեցէք ևւ զո՛ւ պիտի մնար Մ. ՍԱԳԱՆՍ

ՄԵԾ ՍՐԷԱՐԱՆ ԷՍԵԿԿԿԱՆ

GRAND CAFE ARMENIEN (Le Caire)

Սույն Սրճարանը որ Միսան էլ Խաղկեսարի օղաւուն հրապարակի վրայ կը գտնուի, իր մաքրութեամբ ևւ ընդարձակութեամբ տեսակի մէջ յարմարագոյններէն մին է հանգստանալու ժամանակ անցնելու: Սրճարանը յաճախողներ վերոյիշեալ առաւելորդիւններէն զատ հոն պիտի գտնուի նաեւ շաւարչի ընկելիներ, ճոր ևւ ընկիւր պիւրասունք ևւ անքերի սպասարկութիւն:

ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ
ՄԻՍԱՐ ՍԱԳԱՆՍ

ԵՐԵՒԱՆ

ՁԱԵՏԱԿԱՆ ԱՍՏԱՐԵՐԸ

ՏԵՏԱԿԻ ԳԻՒՄԻՆ 16 ԷՋԻՔԷ ԲԱՂԱՅՈՒՑ

ՏԵՏԱԿԻ ԳԻՒՄԻՆ 16 ԷՋԻՔԷ ԲԱՂԱՅՈՒՑ

Բովանդակն ամէն տարի հասարակ է՝ ԳՆԱԿԻ, Ձեռնի՛ Հասը Մէջ ԴԱՆՈՂ, ԷՂ, ԷՂ, ԷՂ, Le Caire

Հասցէ՝ Rédaction de la Revue « EREWAK » Chareh Abd el Aziz

ԾԱՆՈՒ ԳԻՐԻՅԵՐ

ԺՈՂՈՎՈՒՐԻՆ ՄԱՏՆԱԴԱՐԱՆԸ

Թիւ 1 Թրքուհին 50 սանթիմ
« 2 Հիւլէն 50 »

Ժողովուրդին Մատենադարանի գործընկերներուն հեղինակն է Տ. Ա. Պալեան, եզրագրասացը քաջ ծանօթ իր հրատարակութիւններով ևւ յօդուածներով: Թրիւնիկն պատկեր մ'է Ուրֆայի կոտորածին, ևւ Հիւլէն եզրագրագրի հայտնիան աստջին օրերուն մի մտնրանկարը յեղափոխական գործունէութեանց վրայ խորհրդածութիւններով: Դիմել « Սրչարչու » ի խմբագրութեան կամ ուղղակի հեղինակին, հետեւեալ հասցէով:

A. BALIAN

(Egypte) Le Gaire

Տ Պ Ա Ր Ա Ն

ԱՐՇԱԼՈՅՍ ԼՐԱԳՐԻ

ՀԻՄՆՈՒԱԾ 1900 ԻՆ

ՀԱՍՏԱՏՈՒԱԾ ԷՒ ՇԱՐԱ ԱՊՏ-ԷՂ-ԱՋԻՉ
ՇԷՐԻՑ ԲԱՏԱՅԻ ՊԱՐՏԷՂԻՆ ԴԷՄ

Կ'ընդունի տարգրական ամէն տեսակ յանձնարարութիւններ: Նամակագրութիւն, աղբարարութիւններ, այցի քարտեր, մահազգներ, գիրքերու ևւ պրոչիւրներու տարգրութիւններ ևւ այլն: Գանձնարարութեանց համար սակարկուած գնոյն կէսը կանխիկ է, իսկ մնացեալ կէսը յետ տարգրութեան՝ յանձնման պահուն վճարելի է: Գանձնարարութիւնը ամենայն ճշգրտագրութեամբ պիտի կատարուին: ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ՏՊԱՐԱՆԻ